2811

ЗКП 4
Ц-70

1934.

2019

34-К
Са 935
(189)
ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ.—«ԽՍՀՄ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՑԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ»

(Առաջադրությունը նախատեսված է յերկու պարապմունքի համար)

ԱՌԱՋԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

1. ԽՍՀՄ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ինչո՞ւմն է արտահայտվել ԽՍՀՄ-ի կառուցվածքի փոփոխությունը և յերկրի զեմքի արմատական փոփոխությունը առաջին հնգամյակի հանրագումարում։

2. Ինչու՞ վորպես հրաշք չի կարող դիտվել տեղի ունեցած «վիթխարի փոփոխություններն ինչ վոր յերկույերեք տարում հսկայական պետության տերիտորիայում՝ նրա հետամնաց տեխնիկայով, նրա հետամնաց կուլտուրայով հանդերձ»։

3. Ի՞նչ վիճակում են հիմա անտեսաձևերը, վորոնք գոյություն են ունեցել մեր յերկրում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո և ինչու՞ սոցիալիստական անտեսաձևը հանդիսանում է հիմա «անբաժանելիորեն տիրապետող և հրամայող ուժ» (Ստալին)։

Բ. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

4. Ինչո՞ւմն է արտահայտվում այն փաստը, վոր մեր յերկիրը դարձել է «հատկապես և վերջնականորեն ինդուստրիալ յերկիր և ինչու՞ ինդուստրիացման գործում վճռական նշանակություն ունի արտադրության գործիքների և միջոցների արտադրության աճումը։

5. Ինչու՞ արդյունաբերության ամենակարևոր նվաճումը՝ նոր մարդկանց և արդյունաբերության նոր ղեկավարների դաստիարակումն ու դարբնումն է հանդիսանում։

3КП4
Ա-70

6. Վորոնք են մեր արդյունաբերության հիմնական թերությունները, վորոնք են մասնավորապես նավթային արդյունաբերության վերաբերվող թերությունները։

7. Վորոնք են նշված թերությունները վերացնելու այն հերթական խնդիրները, վոր դրվել են կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի կողմից։

Գրականություն

1. Ստալին.—Հաշվետու զեկուցումը՝ Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարին, 2-րդ մաս, ներածություն։

2. Մոլոտով. — Զեկուցումը՝ Համկոմկուսի(բ) 17-րդ համագումարում, 1-ին մաս, § 1-ին։

3. Կույբիշեվ. — Զեկուցումը՝ Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարում, մաս 1-ին, § 3-րդ։

4. Ընկ. Որջոնիկիձեյի ճառը (ընկ. Ստալինի զեկուցման շուրջը մաքերի փոխանակության ժամանակ)։

Գ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

1. Ինչումն են գտել իրենց արտահայտությունը՝ մեր գյուղատնտեսությունը սոցիալիստական հիմունքով վերակազմակերպելու դժվարությունները։

2. Ինչու վերակազմակերպման շրջանն ամենահիվանդագին կերպով կրեց գյուղատնտեսության անասնաբուծական ճյուղը և վորոնք են այդ բնագավառի խնդիրները։

3. Ի՞նչպես է զարգացել մեզ մոտ կոլեկտիվացումը նշված ժամանակաշրջանում և ինչումն կարտահայտվի ճնացած անհատական տնտեսությունների կոլեկտիվացման հետագա պրոցեսը։

4. Ի՞նչպիսի դեր են խաղացել ՄՏ կայանների քաղբաժինները գյուղատնտեսության վերելքում կոլտնտեսությունների աշխատանքի բարելավման գործում և ինչումն են արտահայտվել գյուղատնտեսությանը պրոլետարական պետության ցույց տված ոգնության մյուս ձևերը։

5. Վորոնք են Հողժողկոմատի և Խորհրդաժողկոմատի աշխատանքի մեջ ընկ. Ստալինի կողմից նշված թերությունները։

6. Ինչու մեր մարզերի բաժանումն արդյունաբերական ու ագրարային, սպառողական ու արտադրող մարզերի՝ արդեն ապրեց իր շրջանը։

7. Վորն է առաջին հնգամյակի ընթացքում արդյունաբերության և գյուղատնտեսության ընդգավառում ձեռք բերած մեր նվաճումների հանրագումարը։

Գրականություն.

1. Ստալին.—Հաշվետու զեկուցումը՝ Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարին, 2-րդ մաս, § 2-րդ։

2. Մոլոտով.—Զեկուցումը՝ Համկոմկուսի(բ) 17-րդ համագումարում, 1-ին մաս, § 2-րդ։

3. Կույբիշեվ.—Զեկուցումը՝ Համկոմկուսի(բ) 17-րդ համագումարում. 1-ին մաս, § 3-րդ։

4. Ընկ. Ցակովլյեվի զեկուցումը. «Իզվեստիա», փետրվարի 7-ից։

Դ. ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՎԵՐԵԼՔԸ

1. Վորոնք են աշխատավորների նյութական դրության և ամբողջ կենցաղում այն արմատական բարելավումները, վորոնք բղխում են պրոլետարիատի շահագործողների հանդեպ տարած պատմական հաղթանակներից։

2. Ինչումն է արտահայտվում՝ ձեռք բերված հաջողությունների հետևանքով, մեր քաղաքի և խորհրդային գյուղի տեսքի փոփոխությունը և վորոնք են քաղաքի ու գյուղի միջև յեղած հակադրությունների անհետացման մոմենտները։

3. Վորոնք են աշխատավորների այն հիմնական նվաճումները, վորոնք ձեռք են բերել նրանք իրենց նյութական դրության, կենցաղի և կուլտուրայի բարելավման ասպարիզում։

4. Վորոնք են կին-կոլտնտեսականների ակտիվության աճման գծով յեղած նվաճումները և ինչումն է այդ փաստի նշանակությունը։

Գրականություն

1. Ստալին.—Հաշվետու զեկուկումը՝ Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարին, 2-րդ մաս, § 3-րդ։

2. Մոլոտով. — Զեկուցումը՝ Համկոմկուսի(բ) 17-րդ համագումարում, 3-րդ մաս։

3. Կույբիշեվ.— Զեկուցումը՝ Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարում, 2-րդ մաս։

Յե. ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ ՅԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԸ

1. Ի՞նչ նշանակություն ունի յերկրի տնտեսական կյանքում ծավալուն ապրանքաշրջանառությունը քաղաքի և գյուղի միջև, յերկրի շրջանների և մարզերի միջև, ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի միջև։

2. Ինչո՞ւմ է կայանում մի քանի կոմունիստների դեպի առևտուրն ունեցած արհամարական վերաբերմունքի և փողի ու խորհրդային առևտրի մահացման ու դրանց ուղղակի մթերքափոխանակությամբ փոխարինելու մասին յեղած ձախլիկ շաղակրատությունների վնասակարությունը։

3. Ի՞նչպիսի միջոցառումներ է անցկացրել կուսակցությունը խորհրդային առևտրի ծավալման և նրան պատշաճ բարձրության վրա բարձրացնելու համար։

4. Վո՞ւր է տրանսպորտի նշանակությունը մեր եկոնոմիկայում և վորո՞նք են նրա թերությունները։

Գրականություն

1. Ստալին.—Հաշվետու զեկուցումը՝ Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարին, 2-րդ մաս, § 4-րդ։

2. Մոլոտով. — Զեկուցումը՝ Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարում, 1-ին մաս, § 3-րդ։

3. Կույբիշեվ. —Զեկուցումը՝ Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարում, 1-ին մաս, § 1-ին։

4. Ընկ. Վորոշիլովի ճառը Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարում ընկ. ընկ. Մոլոտովի և Կույբիշեվի զեկուցումների առթիվ մտքերի փոխանակության ժամանակ։

ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչպիսի յերեք հիմնական խնդիրներ պետք է լուծվեն յերկրորդ հնգամյակում։

2. Ինչո՞ւ յերկրորդ հնգամյակի տնտեսական գլխավոր խնդիրը հանդիսանում է ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ավարտումը։

ՀՍՍՌ-Ամ ԳՍՓ
363/6-66

3. Ի՞նչպես է ավարտվելու կապիտալիստական տարրերի և ընդհանրապես դասակարգերի վոչնչացման խնդիրը։

4. Ի՞նչ կերպ են վոչնչացվելու դասակարգային տարբերություններ ծնող պատճառները և դասակարգերն ընդհանրապես։

5. Ի՞նչ է նշանակում հաղթահարել կապիտալիզմի մնացորդները եկոնոմիկայում և մարդկանց գիտակցության մեջ։

6. Ի՞նչ է նշանակում հաղթահարել կապիտալիզմի մնացորդներն եկոնոմիկայում և մարդկանց գիտակցության մեջ։

6. Ի՞նչպիսի միջոցառումներ են անհրաժեշտ յերկրորդ հնգամյակում աշխատավորների սպառման մակարդակը $2^1/_2$—3 անգամ բարձրացնելն ապահովելու համար։

Գրականություն

Ընկ. Մոլոտովի զեկուցումը՝ Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարում («Պրավդա» կամ «Իզվեստիա» փետրվարի 6-ին). Ներածություն։

Բ. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏՈՒՄԸ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ

1. Ի՞նչ է նշանակում ավարտել ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցումը ԽՍՀՄ-ում։

2. Ինչպիսի խնդիրներ են դրվում յերկրորդ հնգամյակում արդյունաբերության մեջ արտադրանքի ծավալի աճման նկատմամբ, աճման տեմպերի նկատմամբ և ինչով է դրդված արտադրության միջոցների և սպառման միջոցների ճյուղերի վերաբերյալ աճման տեմպերի նախատեսված հարաբերությունը։

3. Վորո՞նք են գյուղատնտեսության վերելքի և վերակառուցման ուղիները յերկրորդ հնգամյակում։

4. Ի՞նչ բանի հիման վրա մենք «լիակատար իրավունքով կարող ենք ասել, վոր գյուղատնտեսական աշխատանքը դառնում է ինդուստրիալ աշխատանք»։

5. Վորո՞նք են տրանսպորտի վերելքի և վերակառուցման ուղիները յերկրորդ հնգամյակում։

50670-Ա.Հ.

6. Ինչու՞ յերկրորդ հնգամյակում ընկ. Ստալինի լոզունգը՝ «Վերակառուցման շրջանում տեխնիկան վճռում է ամեն ինչ»—ավելի մեծ նշանակություն ունի, քան առաջին հնգամյակում։

7. Ի՞նչպիսի խնդիրներ են կանգնած յերկրորդ հընգամյակում աշխատանքի արտադրողականության և ինքնարժեքի իջեցման ուղղությամբ և ի՞նչպիսի միջոցառումներով ե վոր պետք ե ապահովվի այդ հմտական վորակական ցուցանիշների իրագործումը։

8. Ինչպիսի տեղ կգրավի ԽՍՀՄ համաշխարհային արդյունաբերության մեջ՝ արտադրանքների տարբեր տեսակների գծով՝ յերկրորդ հնգամյա պլանի հաջող կատարման հետևանքով։

9. Ի՞նչպիսի խնդիրներ են դրված յերկրորդ հնգամյակում Միության նավթային արդյունաբերության առաջ։

Գրականության

1. Մոլոտով. Զեկուցումը Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարում. 1-ին մաս, § § 1, 2, 3, 4։

2. Կույբիշեվ. Զեկուցումը՝ Համկոմկուսի (բ) 17-համագումարում. 1-ին մաս, հատկապես այն տեղը, վորը վերաբերվում ե նավթային արդունաբերության խնդիրներին։

Գ. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՈՒ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎԵՐԵԼՔԸ

1. Վո՞րն ե շինարարության ընդհանուր ծավալը յերկրորդ հնգամյակում և ի՞նչպիսի սկզբունքների հիման վրա ե վոր տեղադրվում ե շինարարությունն ըստ ԽՍՀՄ-ն առանձին շրջանների։

2. Ի՞նչպիսին կլինեն յերկրորդ հնգամյակի շինարարական ծրագրի իրագործման արդյունքները՝ հետաքրքիր ազգային հանրապետությունների ազգային կուլտուրայի վերելքի համար։

3. Ի՞նչպիսի նոր շինարարական օբյեկտներ են նախատեսված նավթային արդունաբերության գծով։

4. Վորո՞նք են յերկրորդ հնգամյակում շինարարության համար յեղած ծախսերը ծածկելու աղբյուրները։

5. Ի՞նչպիսի կոնկրետ միջոցառումներով ե ապահովվում աշխատավորների նյութական մակարդակի 2, 3, անգամի վերելքը յերկրորդ հնգամյակում։

6. Ի՞նչպիսի կոնկրետ միջոցառումներ պետք ե կենսագործվեն յերկրորդ հնգամյակում աշխատավորների կուլտուրական մակարդակի վերելքի համար։

7. Ի՞նչից ե կախված մասսաների նյութական և կուլտուրական մակարդակի վերելքի վերաբերյալ խնդիրների հաջող կատարումը։

Գրականություն

1. Մոլոտով—Զեկուցումը Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարում, մաս 2-րդ և 3-րդ։

2. Կույբիշեվ—Զեկուցումը Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարում, մաս 2-րդ։

Դ. ՊԱՅՔԱՐԸ ՀԵՂԳԱՄՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Վորո՞նք են այն արգելքները, վոր հաղթահարված են բանվոր դասակարգի կողմից կուսակցության ղեկավարությամբ՝ անցած ժամանակաշրջանում։

2. Ի՞նչ դեր ե ունեցել ընկեր Ստալինը ԽՍՀՄ-ի ներքին և միջազգային դրության բոլոր բնագավառներում կուսակցության և բանվոր դասակարգի կողմից նվաճված հաջողություններում։

3. Վորո՞նք են ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության և կուլտուրայի աճման ու կապիտալիստական յերկրներում տիրող դրության համեմատության հանրագումարները։

Վորո՞նք են պրոլետարիատի դիկտատուրայի՝ ընկ. Ստալինի կողմից ձևակերպված՝ խնդիրները և ինչո՞ւ պրոլետարիատի դիկտատուրայի հետագա ամրապնդումը հանդիսանում ե յերկրորդ հնգամյակի կատարման պարտադիր պայմանը։

5. Ի՞նչումն ե կայանում հակահեղափոխականությունն ու վնասակարությունն այն տեսությունների, վորոնք դասակարգային պայքարի վերջացումն ու պետության մահացումն ե քարոզում։

6. Վո՞րն ե կուսակցության դերը նոր սոցիալիստական հասարակության ստեղծելու գործում և վո՞րն ե պրոլե-

տարական ինքնաքննադատության դերը բոլոր խնդիրները հաջողությամբ կենսագործելու մեջ։

7. Ընչումն է կայանում եր դարաշրջանի վերությունը և ինչումն է այն յերաշխիքը, որ մեր յերկրի աշխատավորները, կուսակցության ղեկավարությամբ, հաջողությամբ կկատարեն յերկրորդ հնգամյակը։

Գրականություն

1. Մոլոտով—Զեկուցումը Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարում, մաս 4-րդ։

2. Մոլոտով—Յեզրափակման խոսքը։

3. Կույբիշեվ—Զեկուցումը Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարում մաս, 5-րդ։

Առաջադրությունը կազմեց ԸՆԿ. ՍԱՖՐԱՆՈՎԻՉԸ

Ծանոթություն—Առաջադրությունը մշակվում է յերկու պարապմունքի ընթացքում (3/III 13/III)։ Մշակման հիմք է վերցվում ընկ. Ստալինի հաշվետու զեկուցումը՝ Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարին։ Ընկ. ընկ. Մոլոտովի և Կույբիշեվի զեկուցումները, հանդիսանալով ընկ. Ստալինի կողմից տրված սոցիալիստական շինարարության ծրագրի կոնկրետացումը, կապակցվում են ընկ. Ստալինի զեկուցման հետ։

Տվյալ թեմայի հետ անհրաժեշտ է նույնպես կապել խմբակների, դպրոցների ծրագրերի թեմաները (տեսեք Աղրկոմկուսի (բ) Բաղկումի կազմաբաժնի և Մեթոդբյուրոյի պլանը։)

Խմբագրեց՝ Շախունի, Թարգմանեց՝ Սահյան, տեխ. խմբագիր՝ Թաղանյան

ЗАДАНИЕ

Внутр. положение СССР и задачи 2-ой пятилетки

ПАРТИЗДАТ—БАКУ—1934

Baş Mətbuat Mydirligi Myvəkkilligi № 1598. Sifariş № 2[illegible] Firqənəşr № 182. Istehsalata verilmiş 25/II-34. Capa imzalanmış 27/II-34. Cap listi 1/2. Kaqız formatı 82×110. Azərnəşr mətbəəsində basıldı 26-lar adına „Kitab Sarajı". Bakı, Əli Bajramov kucəsi.

ZCUC-Арм ССР

10 MAI 1934

Библиотека Института Марксизма-Ленинизма

ЗКПС
Ц-70

2013

<< Ազգային գրադարան
NL0036306